

աշակերտին սովորցնէ մտածել և խօսել: Ընդհանրորդ՝ վարժապետն պէտք է ցոյց տայ զրելու ձևն, սորա համար դասատունն զրուժ է դասատան տախտակի վերայ հարց և պատասխանն նորան տալով օրինակ և ապա զրուժ է նոր հարցեր և պահանջում է ուսանողից պատասխանել: Ա եցերորդ՝ սխալներն պէտք է ուղղել:

Իսկ եթէ ցանկալի է, որ առարկայքն զննել առանձին առանձին, յայնժամ պէտք է ի միտ ունենալ վերոյիշեալ կանոններն ևս այսօրիկ:

Նախ՝ ընտրուած առարկայն պէտք է համապատասխան լինի նպատակին. պէտք է զննել ոչ թէ իրն այլ ևս նորա գործողութիւնն, ուրիշն առաջի ժամանա-

կրն պէտք է ընտրել անբաղադիր և յանգուցիչ իր, այլ յետոյ սակաւ առ սակաւ դիմել դէպի առաւել բաղադրեալ առարկայքը: Նշրկորդ՝ բացատրութիւնք պէտք է լինին ճշտիւ հետևարար և տրամաբանական որ գլխաւոր և երկրորդ կարգի մասերն, որպիսութիւնքն, գործողութիւնքն լինին կատարելապէս պարզ և հասկանալի: Նշրկորդ՝ եթէ ցանկալի է շուտ և լաւ հասանել նպատակի պէտք է միշտ գործածել միևնոյն տրամաբանական կարգը և հարկաւոր է աշխատել որ աշակերտն հասկանայ և սեփհականէ դասառութեան կարգն ոչ թէ վեր ի վերոյ այլ հիմնաւոր:

Թարգ. Ստեփան Օրբելի

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՀՐԱԹԵՇՏ ՎԱՐԴԱՆԱԵՑ ՄԱՄԻԿՈՆԷԻ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ՆՈՐԱ ԵՐԱՆԵԱԿ ՏԻԿՆՈՋ 1):

Վարդան:

Բարեաւ մընա՝ անդուգական իմ անձկալի կողակից.
 Կենցաղական ճանապարհիս հաւատարիմ ուղեկից.
 Ինձ հրաւեր եկաւ Ազգէն՝ որ ժողովուրդ է ի մարտ.
 Իմ և փոքր ինչ ուշանալս՝ զիս տի առնէ դատապարտ:
 Երբ ձմեռը արձակեցի ուխտապահք զօրքն իւրեանց տուն.
 Միւսանգամ ժողովուրդոյ զրինք պայման հաստատուն,
 Բարեկենդան կատարեցինք, և աղուհացք անցուցինք,
 Մեր ընտանեաց, ազգականաց Գրիստոս յարեաւ ասացինք:
 Պարտից զօրքը ըսկսել են Փայտակարան երևել,
 Սիւնեաց իշխանն պիտի ջանայ այն բանակի մէջ լինիլ.

(1) Առ ի չգոյէ գրեանց՝ վարդանոյ կնոջ անունք չկարոցի ստուգել. դիտեմ որ չէր երանեակ:

Մեր այրուձին Արտազու գաշտ ուխտեց անշուշտ հասանել,
Դեռ չանցուցած յինանց աուրք դէմ թշնամեաց մարտ դնել:

Դարանէակ:

Բարեաւ երթամ քաջ իմ Վարդան՝ Մամիկոնեան տան պարծանք
Աջն Աստուծոյ մերժէ քեզմէն ամեն վտանգ և փորձանք,
Ուրախութեամբ վերադառնաս՝ սփոփես քո զերդաստան,
Քեզմով նորոգ մխիթարուի՝ քո սիրական Լայաստան:

Վարդան:

Ձէ՛, յոյս չունիմ միւսանգամ պատերազմէն դառնալոյ,
Պամ քեզ դարձեալ այս աշխարհի մէջ աչքս բաց տեսնելոյ,
Իմ առջևս բիւր մահք կան, բայց ես մէկէն չեմ զողար,
Թող իմ արիւնս թափուի այն տեղ, դառնամ ես զոհ հաշտ արար:

Դարանէակ:

Մի՞թէ կասկած չարագուշակ կայ արդ առջևդ առանձին,
Քո պատերազմ պատրաստուելոյդ՝ չէ՛ այս նուագ առաջին,
Երբէք լսած չեմ քո բերնէն այսպիսի խօսք՝ քաջ Վարդան,
Չլինի թէ երկիւղ կուտայ քեզ Սիւնեաց Տէրն դաւաճան:

Վարդան:

Ո՛չ Սիւնեաց Տէրն, և ո՛չ Պարսից բիւրաւորաց բազմութիւն,
Իմ սրտիս մէջ կարեն շարժել ահ կամ մահու տրտմութիւն,
Դու չգիտես որ մեր նախնին ճենազն Մամիկոն երդուեալ էր,
Արիւն համակ իւր սերնդոց պատարագել յազդին սէր:

Ես յայտնապէս և պարզ ասեմ՝ որ արդ կերթամ մեռանիլ,
Մի՛ արտասուեր, ես չեմ կարող անկողնիս մէջ վախճանիլ,
Ինձ յայտնութիւն եղև այն օր՝ երբ համարեալ Խաչ Փրկչի,
Ուրացութեանս կեղտ լուանալ իմով արեամբ ուխտեցի:

Սրբազանից ժողով խմբեալ կայր յԱրտաշատ քաղաքի,
Ամենեքեան էին ընկերք իմ մանկութեան հասակի,
Ես նոցա հետ էի դնացած ուսումն առնուլ Յունաստան,
Երբ հանգեաւ Պապո՛ ի միասին կրկին դարձանք Լայաստան:

Դաս ընկերս էր Վաթողիկոսն, սննեկակից՝ Աէոնդէս,
Տես թէ ինչպէս սրտառու էր ազգապարծանք այս հանդէս,
Չախորդ կասկած կայր նոցա մէջ իմ համոզմանց հակառակ,
Պկարծէին թէ Քրիստոսէն սարուցել է զիս Վասակ:

Մէկ տեսնէիր թէ ի՞նչ կերպով Մամիկոնեան առիւծը,
Ծնկաց վերայ զետնամածեալ կարտասուէր իւր արածը,
Ասի այս աղտ հեղմամբ արեան լգիտի անձնէօ լուանամ,
Չայն լուեցաւ խաչէն կայ քեզ՝ պատրաստ պսակ անթառամ:

Սուրբ ժողովոյ Հարք ինձ անուն տուն ուխտեալ զօրական,
 ևս՝ երկնից եմ, և ո՛չ երկրի, զո՞չ է ազգին քո Աւարդան,
 Առանց Հեղման իմոյ արեան ատրուշանք շին շիջանիք,
 Եւ վատարազդ ազգ Հայոց չի՝ Պարսից լուծէն զերծանիր:

Երանեակ:

Վարդան՝ ինչո՞ւ մինչև այսօր չէիր դու ինձ այս պատմած,
 Արտաշատի սուրբ ժողովէն շատ ժամանակ է անցած,
 Ես է՞ր պիտի բարեկենդան կատարէի իմ տանը,
 Երբ միւսանգամ բարեկենդան տեսնելոց չէր Աւարդանը:

Վարդան:

Եւ կին, դեռ շատ օրեր ունիս առջև լոյ սուր պահելոյ,
 Հատ ժամանակ պիտի տեէ Հայաստանի օր լալոյ,
 Երբ Մակարէ Յուդայի պէս ընկնի Հղօրն ի կործան,
 Երբ ազգի մէջ գուժէ սև բօժ՝ եմէ "անկաւ քաջ Վարդան,"

Երբ քաջարի զօրքն Հայոց իրբև մէկ հօտ անհոյժիւ,
 Արտասուալից և զլիսակօր՝ մարտը թողու, գայ ցրիւ,
 Ա՞խ, Երանեակ՝ երանի՞ թէ դնեն դիակս ի վաճան,
 Բերեն առ քեզ և ասեն՝ թէ" ահա մեռած քո Վարդան:

Դու քո ձեռամբ կը փակէիր շամանդաղեալ իմ ակներ,
 Դու քո ձեռամբ կը խաչէիր կրմնխացեալ իմ ձեռներ,
 Կը տանէիր իմ դիակս հայրենատուր մեր կալուած,
 Կը թաղէիր ուր որ նախնիք տոհմիս ցայս օր կան թաղուած:

Կաւանդէիր գիրեզմանին հողանալի իմ մարմին,
 Բաղըր արտասուօքդ կլմանայիր զսառն հող տապանին,
 Կուխտէիր շուտ բաժանորդել այն մահահոտ օթեան,
 Եւ հողի մէջ առնուլ ի զիրկդ զսիրելին քո Վարդան:

Բայց չի լինիր բաղձանքիս պէս, կուգան Պարսիկք լըրարար,
 Սմբակակոխ կառնեն զերկեր, հուր սուր կածեն չարաչար,
 Գերի կառնուն թէ այր թէ կին, թէ ծեր, մանուկ, պատանի,
 Ի Տագաստան կվտարեն, հեռի յերկրէն հայրենի:

Միւնեաց իշխան չի՝ պատկառիր նահատակաց Յիկնայքը,
 Պարսից ձեռին մատնել աւար, խախտել Հայոց պարծանքը,
 Կանայք, հարսունք և օրիորդք կը լըքանեն իւրեանց տուն,
 Ի սար, ի ձոր կապատանին՝ գտնել անձանց փրկութիւն:

Դու չես կարող զալ ի խնդիր քո Վարդանի դիակին,
 Պարսից, Հայոց արեան մէջը կը թաթաւի իմ մարմին,
 Անչնչացած մարտի տեղը դաշտ բացօթեայ անխրնամ,
 Անթաղ, անտէր շատ օրերով դիականց մէջ կը մընամ:

Թշնամի չեմ ես Վասակին՝ բայց կուզէի ի մարտի,
 Յոյց տալ նրան անձամբ անձին աջողութիւն իմ բազկի:

Նա իւր գլխին թագ կցանկայ՝ ազգն անզուխ անելով,
Ազգ և կրօն և հայրենիք ի գերութիւն մասնելով:

Ո՛վ թէ ի՞նչպէս պիտի ուրախ թաղել տայ իմ՝ մարմինը,
Եւ անծանօթ տեղ թաքցրնէ իմ՝ աննշան տապանը,
Բայց ես զիտեմ որ նա զսպել չէ՛ կարող իւր արտասուք,
Երբ որ տեսնէ թէ զիս գտան ճակատու տեղն խուզարկուք:

Թէ ինձ պտրես՝ գուցէ գտնես՝ ուր փիղք պիտի մարտնչին,
Ուր անմահ գունդք Պարսից զօրաց աջէս պիտի կորնչին,
Ուր զիսկունք վահանափակ՝ զրահակիր վառելոց,
Ի մէջ փղաց, ձիոց կընին խառն ընդ անշունչ հեծելոց:

Ի խռան ցցուեալ նետից տիգաց և խորտակեալ նիզակաց,
Որ ի հեռուստ պիտի ցոյց տայ տիպ փշալից մացառաց,
Ուր զրօշակք կծածանին ո՛չ յօղն ի վեր, այլ՝ յերկրի,
Եւ պղնձի գալարափողք լուռ կը մընան ի գետնի,

Ուր կորովի սպառազէնք անկեալ վերայ աղեղանց,
Խուլ հոնտիւն հոգեպահանջ կհնչեն խոցք գեղարդեանց,
Ստրատելատ եմ կայսերաց, սպարապետ տան Արեաց,
Տապանիս չեն հովանանար գոյն գոյն ծուէնք զրօշակաց,

Ո՛չ հայկազանց հեզ Աղանին, ո՛չ Արարատ, ո՛չ Տապան,
Ո՛չ Արծուին Արշակունեաց, և ո՛չ Ախլապն Տիգրանեան,
Զի բարձրանար դամբարանիս վերայ շինուած յաղթական,
Զեն զրոշմուիւր վիմին վերայ, ո՛չ սաղաւարտ, ո՛չ վահան,

Զէնքս ու զրահքս կառնու Մուշկան՝ Նիւսալուուրտ ճոխ աւար,
Բո Աարդանէն Հայաստանին նշան անգամ չի մնար,
Կարելի է թէ յապագայն հայրենասէր համազգի,
Կամ նոյն ինքն Աահան մանուկ որդին եղբօրս Հմայեկի,

Խնդիր առնէ գերեզմանիս, և գտնէ իմ տապանը,
Եւ խաչանիշ մէկ քար դնէ՝ մեծարել իմ վախճանը,
Շուշանիկիս մխիթարէ՛, նորա այր չէ՛ քրիստոսեան,
Յերակս նորա դեռ ամբողջ կայ արիւն տոհմին սասանեան*):

Վտանգի մէջ է Արաստան քրիստոսուրաց Վազգէնէն,
Որ անդադար ձախող խրատ կառնու Սիւնեաց իշխանէն:

Երանելի:

Ո՛հ՝ թէ որքան ծանր է հարուած ինձ վերահաս յԱրարէն,
Զիս այսօրվա՞ն կպահէիր փայլուն քնքուշ վարդի պէս,
Յետ այսբան ամ երանաւէտ մամիկոնեանց հարսնութեան,
Ինձ նոր պիտի շրջապատեն թխազգեստ քուրձք այրութեան,
Բայց ինձ չէ՛ վիշտ այրիութիւն, ո՛չ տիկնութեան կորուստը,
Ո՛չ ի տանէս տարազրութիւն, ո՛չ սար ու ձոր փախուստը,

(*) Վրաց թագաւորը սկսեալ ի Միհրանայ Նունէի՝ էին Սասանեանք:

Ինչ ցաւ այն է՝ որ չի՛ լսուիր ձայն Վարդանայ ի դաշտի,

Ո՛չ ազգ Հայոց կասէ ունիմ քաջ զօրավար ի մարտի:

Այսուհետև յուսմէ՞ պիտի Պարսկական զօրք սասանեն,
Յուսմէ՞ պիտի յԱղուան. ի Վիրս, ի Հոնս նպաստք հասանեն,
Յազկերտ կարէ իւր մոգերուն, մոգպետներուն արձակել,
Ու ամենտեղ կրակատուն և մոխրանոց հիմնարկել:

Տունք Աստուծոյ կկործանուին, տունք աղօթից կջնջուին,
Եկեղեցիք, վանք և տաճարք տուն գարշելեաց կփոխուին,
Գը բունանայ Զէնդ Աւետար, Աւետարան կը լըռէ,
Ուրացութիւն սուրբ հաւատոյ քաղաք և գիւղ կը տիրէ:

Վարդան՝ մինչդեռ կենդանի ես՝ Պարսիկք չին գար Հայաստան,
Հայոց մէջը քո չափ պատիւ չունի Վասակ մարզըպան,
Ինչո՞ւ կամաւ կերթաս յայտնի կանխագուշակ մահուդէմ,
Այս աշխարհէն գնանք կրկին Բիւզանդիոն տարագէմ:

Վարդան :

Ինչ այս միջոց ազգ, հայրենիք թողուլ, երթալ չիք հնար,
Զօրք ի՞նչ անեն՝ թէ նեղ օրը՝ նոցա ձրգէ զօրավար,
Թէպէտ Հայք չեն Աթէնացիք. և ես Վողրոս չեմ այսօր,
Բայց հայրենեաց համար մեռնիլ՝ է մահ քաղցր և փառաւոր:

Դու մի՛ մընար Հահապիվան, ասպատակէն զգուշացիր,
Ա՛ գանձերս և Վարդուհի, յն՝ դէպ Յունաստան հեռացիր,
Իմ մահէս յետ Հայաստանը շուտ չէ կարող խլըտիլ,
Միհրներսէհ և Յազկերտը ազգին չեն տար հանդարտիլ:

Իշրանեակ :

Վարդան՝ ի՞նչ է քո ասածը, մի՞թէ պիտի ես փախչիմ,
Երբ հալածանք գայ մեր աշխարհ, մի՞թէ դահճէն կը թաքչիմ,
Ինչու ցայս օր սէր աշխարհի սրտիս մէջ չես սերմանած,
Ինչո՞ւ ինքդ միշտ նեղ, անձուկ ճանապարհս ես նախընտրած:

Դու չէի՞ր որ ամենայն օր կանանց այս խրատ կուտայիր.
Թէ ձեր որդոց և դստերաց սովորեցրէք երկու իր.
Որ ազգ սիրեն և հայրենիք՝ և կրօնը չուրանան,
Երբ հայրենեաց վտանգ հասնի՝ իւրեանց անձնը մոռանան:

Քանի անգամ եմ ես լսել քո բերանէն այս խօսքը,
Թէ ազգութեան պահպանողն է քրիստոսական կրօնքը.
Դու կասէիր՝ թէ մեր կանայք ունին լաւ լաւ օրինակ,
Եւ միշտ պիտի իւրեանց տան մէջ կրկնեն նոցա յիշատակ:

Սէր հայրենեաց պիտի սովորեն Տիգրանուհի դշխոյէն,
Սէր հաւատոյ թող ուսանին սրբուհի կոյս Սանդուխտէն,
Եթէ փեսայդ քեզ յորդորէ մատնիչ լինել հայրենեաց.
Տիգրանուհոյ նման ոտիք կոխէ շքեղ թագ Մարաց:

Թէ ծնողք քեզ խոտորեցնեն քրիստոսական կրօնէն,
 Սուրբ Ասնդուխտը թող միտքդ գայ, որ մահ առաւ իւր հօրէն,
 Վարդան՝ ինչպէս այժմ թողում ազդ ու կրօն, հայրենիք,
 Փախչիմ առած դուստր և գանձս, երբ մօտ են մեզ թշնամիք:

Իմ հայրենեաց ի՞նչը մոռնամ, Յունաստան ի՞նչ պտրտեմ,
 Թէ միայնակ պիտի նստիմ, ոտքերս ինչո՞ւ կտրտեմ,
 Լաւ չէ՞ որ իմ հայրենեաց մէջ իմ նախնեաց, և քո նախնեաց,
 Գերեզմանաց վերայ լայլով արտփանք տամ իմ թախծանաց:

Շապհոյ վերջին հալածանքին կոտորուեցան ծնողքս,
 Զոհ գնացին սուրբ կրօնի եղբարք, հարսունք և քորքս-
 Հանւոյս եղբայր էր Մոկաց Տէր Ատոմ իշխան փառաւոր,
 Եւ նորա տուն սուրէն անցաւ՝ իս մնացի մենաւոր:

Որբ էի ես՝ միակ ժառանգ լայնածաւալ կալուածոց,
 Զքեզ տեսի մանուկ կորիւն Մամիկոնեան ասիւծոց,
 Յետոյ քո Պապ քեզ ուղարկեց ուսման համար Յունաստան,
 Բեզ հարսնացայ երբ դու դարձար՝ Ստրատիլատ՝ Հայաստան:

Ամենեքեան կը գովէին քո բարեպաշտ մաքուր վարք,
 Կենացս ընթացք ինձ քաղցրացոյց քո հեղ, համբոյր, քաղցր բարք,
 Անձամբ էի Մամիկոնեանց մեծափառ տան հարսնացած,
 Հոգւով մտօք միշտ պարակից անմահարար հարսանեաց:

Թէ ցանկայիր մարդպանութեան, ո՞ր կը մնայր Սիւնեաց Տէր,
 Բո արութիւն յԱրեաց աշխարհ՝ մեծաց փոքունց քաջ յայտնի,
 Թէ մընայիր Բիւզանդիոն՝ միթէ՞ կայսրն Թէոդոս,
 Բեզ չէր տայր բարձ իշխանական՝ ինչպէս ունէր Մարկիան:

Պու ասացեր՝ իմ սիրական հայրենիք զիս հրաւիրեն,
 Փառք աշխարհի ինձ ծերացեալ զօրականիս մեռեալ են,
 Դարձար առ ազգ և առ երկիր, արարեր մեծ յաղթութիւն,
 Մէկ պատերազմ՝ Սէբուստայ դէմ ետ Աղուանից փրկութիւն:

Այժմ կասես՝ պիտի մեռնիմ և ինձ փախուստ կ'ստորեն,
 Որպէս թէ ես Հայ աղջիկ չեմ, պիտի խուսեմ իմ ազգէս,
 Երբ որ տիկնայք քո մահակից առաջինի իշխանաց,
 Բո կարծիքով պիտի գերի երթան յաշխարհ Անարեաց:

Չէ՞ քաջ Վարդան, ինձ քաղցր է կեանք՝ երբ քեզ հետ է միասին,
 Մի օրինակ թէ մահ թէ կեանք՝ թող լինի մեր երկուսին,
 Եկեղեցին մեզ միացրուց, նա առաւ մեր երգումը,
 Նա վերստին թող ընդունի՝ ինչ որ կան մեր սրտումը:

Մշտն պիտի գանձերդ առնում, դատերս հետ փախուստ տամ,
 Լաւ չէ որ միւս տիկնանց հետ դէմ հալածանաց զօրանամ,
 Յունաստան շատ է գրնացել Հայաստանի գանձերէն,
 Թող մեր ազգն օգուտ քաղէ քո և իմ ճոխ մըթերէն:

Նթէ կանայք նախարարաց երթան գերի Պարսկաստան,
 Եւ ևս նոցա կընկերանամ դէպ այն երկիր հեռաստան:

Եթէ նորա սարերն ընկնին, ապաստանին ձորերը,
 Կը քաղցրացնեն դառն վիճակ նոցա իմ մեծ գանձերը
 Մի՛թէ այնտեղ չպիտի՞ սոսկանք պատերազմի աղէտքէն,
 Մի՛թէ այնտեղ չպիտի՞ հոսն յորդ արտասուք մեր աչքէն.
 Վարդան՝ հազար և բիւր տիկնայք կ'լինին ինձ ողբակից,
 Կոյս աղջկունք և օրիորդք կ'բաժանեն իմ կսկիծ,
 Քանի կենդան եմ, պիտի լամ, թէ սար լինիմ, թէ ի ձոր,
 Քո մահ պիտի զիս խոցոտէ, վէրքս պիտի լինին խոր,
 Աչքերէս չէ ցամաքելու արտասուաց յորդ աղբիւրը,
 Միշտ առջևս պիտի շողայ քո հոգեհան սուսերը:

Վարդան:

Ինձ սուսերով չեն սպանիր, այդ մասին բնաւ երկբայ չեմ:
 Ինձ մօտ եկող ախոյեանին աջող բազկաւ կը ջնջեմ,
 Սուսեր, գեղարդ, վաղակաւոր՝ չեն ինձ համար ահաւոր,
 Հեռաստանէ դիպաղեղունք կարձակեն նետ նենգաւոր,
 Երբ ես սուրս վերամբարձած լինիմ հարուած ածելոյ,
 Ասպար վահան ձախով բռնած ձիոյս երախ սանձելոյ,
 Կորովածիգ հաստաղեղունք նշան դնեն պատնշէն,
 Միայն դովաւ կարող կ'լինին արիւն հանել իմ կաշէն,
 Բայց տաս, քըսան հարուած վիրգաց ինձ չէ կարող սպանել,
 Մամիկոնեան կարմիր արիւն երակներէն շուտ հանել,
 Երբ անդարման մնան վէրքս, արեան աղբիւրք յորդ հոսն,
 Կորուստ արեան ոյժս կառնու, կեանք ընդ ծակտիս կը խուսնն,
 Այս կ'լինի այն ժամանակ՝ երբ թիկնապահքս կոտորուին,
 Երբ զինակիրք, կապարձակիրք յերիվարաց զլորուին,
 Զլլինի ոք զարման տանող, վէրքս մնան անխնամ,
 Ես չեմ կարող ասել քաջաց՝ կացէք մինչև ես դառնամ:
 Զեմ ասիր թէ կ'երթայ արիւն ամեն խոցէն ապաժոյժ,
 Զեմ ասիր թէ գամ քան զգամ կ'լքանէ զիս իմ ոյժ,
 Մահն այնպէս դարանակալ կ'նստի դէմ իմ կենաց,
 Ար ես բնաւ չեմ իմանար նորա վերջին սուր հարուած:

Երանեակ:

Վարդան՝ քո զոհ է առաւել քան տրոյական Հեկտորի,
 Այլ ես աւել քան զԱնդրոմաք՝ կին ազդասէր քաջարի.
 Զունիմ տղայ ըստընդիաց, այլ սիրտ ունիմ խանդակաթ,
 Բայց չկամիմ ի չեմ ուղւոյդ առնել զքեզ խանդաղատ,
 Թէ չհասնիմ քո սուրբ մարմին ձեռօքս դնել գերեզման,
 Թէ չկրնամ իմ կտաւէն կտրել հանել քեզ պատան,
 Գոնէ այժմ իմ դողդոջուն ձեռամբ կ'դնեմ սաղաւարտ.
 Ի՛մ թաւացած բազուկներով կ'առնեմ զքեզ զինազար:

Փեսայու թեանդ երկրորդ օրը ես քեզ զրահդ հագուցի,
 Լանջապանակ երկաթադամ կուրծքիդ վերայ պնդեցի,
 Մէջքիդ զօտի ոսկեզօծեալ՝ կողքէն կախած սուսերը,
 Զքնաղ երեսդ համբուրելով՝ պսակեցի իմ սէրը:
 Այսպէս՝ այսօր ևս նրման նորափեսայ օրերուն.
 Քեզ կ'պճնեմ ի մէջ ահեղ պատերազմի զարգերուն.
 Թող հայկազնեայ տիկնայք ասնն՝ թէ զօրախար քաջ Աարդան,
 Իւր կենակցի ձեռամբ հագաւ վերջին անգամ վառապան:
 Գնա՛ Աարդան՝ մի ուշանար՝ երբ քեզ ազգն է հրաւիրել
 Քեզ այդ պաշտօն ակնածելի նա էր կրկին նուիրել, 2)
 Մի վշտանար իմ սղախէն, արտասուքս թող թափուին.
 Թող սոցա մէջ վերջին անգամ քո զարշապարք տողորուին,
 Երթաս բարեալ՝ քաջ իմ Աարդան, եմ քեզ հօգուով ուղեկից
 Ինչպէս մարմնով մինչև այսօր էի քաջիդ կենակից,
 Թէ մէկ հնար գաղոյ այնտեղ՝ ուր քեզ արդ մահ հրաւիրէ.
 Գտնեմ, կուգամ, եթէ իմ մահ մինչև այն օր համբերէ.
 Ապա եթէ դու անդ յԱրտաղ, ես աստ Մասիս՝ մեռանիմք,
 Թող կարեկից մեր ազգասէր մօտ մօտ զնեն մեր շիրիմք:

Վարդան:

Զէ՛ իմ տիկին՝ այդ մի՛ կարծեր՝ որ մեր մարմնք մօտենան,
 Թող մեր հողիք ի հանդերձեալ յաւիտենին միանան.
 Ես լաւ գիտեմ՝ որ մեր ազգը ինձ պիտի չը մոռանայ,
 Քանի երթայ՝ աւել սիրէ, նոցա մէջ սէրս զօրանայ:
 Ինձ նահատակ սուրբ կրօնի կասնն յիսնորդք հայկազոնք
 Զիս ազգասէր կ'հոչակնն թէ սոսկականք, թէ գիտունք,
 Իմ օրինակ ամենեցուն համար կլնի համոզիչ:
 Իմ անունը միշտ դործ կածէ հայրենասէր քարոզիչ:
 Ինձ խոստացան հարք ժողովոյն տօնել միշտ զիմ յիշատակ.
 Ամ ըստ ամէ տօնախմբել մեծի մարտիս յաղթանակ.
 Ուխտատեղի պիտի լինի իմ աննշան զերեզման,
 Անմահ համբաւ կ'ժառանգէ անրնակ գաշտ իմ անկման:
 Աարդան անուն հայազգեաց մէջ թովչարար ոյժ կուեննայ,
 Ազգասէրը ամենայն տեղ Աարդան անուն կ'ստանայ.
 Ազգաւերը թէ ուղենայ այս անունով զարդարուիլ
 Խեղահասք չեն անարժանին ներեր նովաւ ըսքողուիլ:
 Աարդան՝ նա վարդ՝ տառադառնայ, իւր մէջ է իւր մեկնութիւն,
 Ազգասէրը վարդի նման ցոյց կուտայ իւր պերճութիւն.

(2) Պատմութենէն ստուգուած է՝ որ Պարսից օրինօք ապստամբ զրկուած
 հնամարուին այն իշխանութենէն՝ որ տուած է ի դրանէ Արեաց:

Թէպէտ Աարդանայ սպարապետութիւնը քունի անգամ հաստատուեցաւ ի
 Պարսից, բայց վերջինը նա կկրէր ստանձնեալ արդէն ընտրութեամբ ազգին:

Իսկ թէ միայն կարմիր փուշ է, և ոչ է վարդ քաղցրահոտ,
 Նորան շուտով դուրս կ'հանէ իւր բուրումն զարշահոտ:
 Հատ խօսեցայ վերջին նուագս, այժմ կասեմ կ'աց բարեաւ,
 Մի մոռանար քո Վարդանին, մի ասեր թէ նա կորեաւ:
 Ինչպէս մարդը թէև մեռնի, գործք և անուն չեն մեռնիր,
 Գանձ, ճոխութիւն անհետ կերթան, սէր ազդին չի վախճանիր:

Հայկազն Ժերմանէ՛ հեղինակ իրաւախոհութեան
 և Վահագնի արագբերէլոց է Օջիւանիս:

Ի ԾՈՎ ԿԵՆՑԱՂՈՅՍ

Ձէ շոր սերմնեցե՛ր շոր՝ շնոյն և հնչեցե՛ր «Գաղտ», 6, 8.)

Քանի ի հողմն ուժգնարաղև, առ ծովն հայիմ Տէր Յիսուս,
 ես յոյժ պակնում յերկիւղ մեծ, ոստնու արագ յինէն յոյս:
 Ձի թէ կոհակք անդ ի վէգ, զնա այնպէս նշաւակ,
 Ձիս զի՞նչ առնեն ալիք, մեղք, յոր ես ծփիմ զերթ նաւակ:
 Նա ըստ իմում թէպէտ ո՛չ, այլ ըստ սահման քում այնպէս,
 Թէ մերթ դադար և թէ կոծ, ցուցցէ զփառս քոյդ պէս պէս:
 Բայց և նմա Արիին միշտ, զարև ո՛չ տայ լոյս պայծառ,
 Գոզցես ընդ ջուրցն շամանդաղ, բազմիցս տայ մէգ և խաւար:
 Օ՛ն ինձ չարեաց մատնիչք ո՞րք, բայց թէ արարք ինձական:
 Ջարև կենացս տարագիր, յինէն ի բաց վարել գան:
 Ի՞նչ այլ իցեն սիրտիչք, երբ վճիռ է անքակ, թէ՛,
 ,,Սերմանողին մնան հունձք,, որում կարի իսկ մարթէ:
 Հապա անձն մեղսածուփ, խաղա՛ ընդ հողմն ուռուցիկ,
 Ջոր վաչխ առեր չար գործոցդ, քեզ յաւելան տոկոսիք,
 Ընդ մահաբեր կոհակաց, որք գան ընդ քեզ ի պայքար,
 Որո՞վ կացցես դիմամարտ, չո՛ւնիս դու դէկ, թիաւլար:
 Հողովքն յողովք քեզ կորուստ, ի յաւիտեան անշուշտ տան,
 Կորուստ՝ յորում եղծագործք, կան ընդ դիւացն ի տատան:
 Ո՛հ դու ընդ դէկն խուճապեաց, ընդ ապաշաւն ասեմ՝ քեզ,
 Ո՞ր զեկավարն սորջանք, և թիաւլարն աղօթքն հեզ:
 Ի սպեղանեաց փրկութեան, զիարդ խորչիս անձն իմ հէգ,
 Ջուր ժխտելով և ունայն, յետս ընկրկիս իրր մերկ,
 Բա՛ և բանին Յովհաննու, զքեզ առնես դիմադարձ,
 ,,Եթէ անմեղ զանձնս՝ ասեմք, խաբեմք,, տուժիմք անդրադարձ:
 Գիտեմ՝ ես Տէր և ճշգրիտ, եթէ պահ մի ակնթարթ,
 Գարձցի յինէն երեսդ ի բա՛ց, ի խորս սուղիմ արդէն արդ,
 Թուտով առ քեզ առձայնեմ, փրկեա՛ ի ջուրց մեղսակոծ,
 Սաստ արկ հողմոց և ալեաց, որոց զրինդն յանդնդոց:

Սարկաւազ Յովակիմ Բարսեղեան Օլականցի